

նայ: Այս բնորոշումով, օգտապաշտութիւնը կը պատասխանէ այն հարցադրման, թե՛ ինչպէ՞ս պէտք է վարուիլ, երբ մենք ունինք վարմունքի զանազան տարբերակներ, որոնք առնչուած են բազմաթիւ անհատներու, դրական կամ բացասական իմաստով:

Օգտապաշտութիւնը, որպէս բարոյագիտական տեսութիւն ծնունդ կ'առնէր 18-րդ դարու ընթացքին, Մեծն Բրիտանիոյ մէջ: Անոր զոյգ նախահայրերը կը նկատուին՝ բրիտանացի բարոյագետ փիլիսոփաներ.- **Ֆ. Հոչեսոն** (Francis Hutcheson, 1694 – 1746 թ.) եւ **Վ. Պալէյ** (William Paley, 1743 – 1805 թ.): Այնուհետեւ, 19-րդ դարուն, օգտապաշտութեան տեսութիւնը զարգացուց եւ բարոյագիտութեան տեսութեան կամ ուղղութեան վերածեց՝ իրաւաբան-փիլիսոփայ **Ե. Բենթամ** (Jeremy Bentham, 1748 – 1832 թ.), որու խմբակին մաս կը կազմէին՝ տնտեսագետ-փիլիսոփաներ, հայր ու որդի՝ **Ջ. Միլ** (James Mill, 1773 – 1836 թ.) եւ **Ջ. Ս. Միլ** (John Stuart Mill, 1806 – 1873 թ.):

Հետագային եւ մինչեւ մեր օրերը, օգտապաշտութեան բարոյագիտութեան ուղղութիւնը ունեցաւ այլ հետեւորդներ եւս, մեծամասնութեամբ՝ Անգլիայէն, ինչպէս նաեւ Աւստրալիայէն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներէն: Այս ուղղութեան կարեւորագոյն անուններն են.- անգլիացի իրաւաբան-փիլիսոփայ **Ջ. Օստին** (John Austin, 1790 – 1859 թ.), անգլիացի բարոյագետ-փիլիսոփաներ՝ **Հ. Սիճվիք** (Henry Sidgwick, 1838 – 1900 թ.) եւ **Ռ. Մ. Հարը** (Richard Mervyn Hare, 1919 – 2002 թ.), ինչպէս նաեւ ժամանակակից բարոյագետ-փիլիսոփաներ՝ ամերիկացի **Մ. Ջ. Սինգեր** (Marcus George Singer, 1926 – 2016 թ.) եւ աւստրալիացի **Պ. Սինգեր** (Peter Singer, *1946 թ.):

Օգտապաշտութիւնը, ժամանակի ընթացքին, կրեց զանազան փոփոխութիւններ եւ յառաջացան զանազան հոսանքներ: Այս պատճառով, սկզբնական դասական օգտապաշտութեան կողքին, զարգացան նաեւ օգտապաշտութեան այլ տարբերակներ, որոնք եւս, յաջորդաբար, յիշատակութեան արժանի են:

➤ ԴԱՍԱԿԱՆ ՕԳՏԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Դասական օգտապաշտութեան հիմնադիրը, ինչպէս նշեցինք, անգլիացի իրաւաբան-փիլիսոփայ **Ե. Բենթամ**ն է, որ ֆրանսական յեղափոխութեան տարին՝ 1789-ին, հրատարակեց իր գլխաւոր երկը՝ *«Բարոյականութեան եւ օրէնսդրութեան սկզբունքներու ներածութիւն»* („Introduction to the Principles of Morals and Legislation“) անուն տակ, ուր կը ներկայացնէ իր բարոյագիտական տեսութիւնը՝ *«առաւելագոյն թիւով մարդոց համար՝ առաւելագոյն երջանկութիւնը»* բանաձեւով:

Բենթամի համաձայն, մարդ կը ձգտի՝ դէպի հաճոյքն ու երջանկութիւնը եւ կը խուսափի՝ ցաւէն ու տառապանքէն. եւ մարդկային այս նպատակին կարելի է հասնիլ՝ *«բարոյական թուաբանութեան»* կամ հաշուարկի, շատերու համար խիստ վիճելի ճամբով: Արդարեւ, Բենթամի համար հասարակութիւնը անհատներու գումարն է, իսկ հասարակութեան շահը կամ օգուտը՝ գումարն է